

# «ԱՌԱՍՊԵԼ ԵՒ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ»

*Posted on October 21, 2013 by Keghart*




Category: [Opinions](#)




# **Քանդակագործ Ռաֆֆի Թոքաթլեանի Փառաւոր Ցուցահանդէսը Մոսկուայի «Պելաեւ» Պետական Ցուցասրահին Մէջ**

Համօ Մոսկոֆեան, Մոսկուա, 21 Հոկտեմբեր 2013

“Հայկական” Մոսկուայի արուեստի եւ գեղարուեստի ընտրանին՝ գլխաւորութեամբ  Ռուսիոյ Նկարիչներու Միութեան փոխ-նախագահ Դաւիթ Ռու-Պապայեանի, «Պելաեւ» պետական ցուցասրահի տնօրէնուհի Մարինա Պուշուեւայի եւ արտասահմանի հարցերով տնօրէն Թոմաս Յարութիւնեանի, հաւաքուած էին 2013 թուականի Հոկտեմբեր 16-ի երեկոյեան՝ բացումը կատարելու աննախընթաց իրադարձութեան մը: Առաջին անգամն ըլլալով լիբանանահայ տաղանդաշատ քանդակագործ, Ռաֆֆի Թոքաթլեանի ստեղծագործութիւնները կը ցուցադրուէին Ռուսիոյ մայրաքաղաքին մէջ, որ իր մշակութային, արուեստի ու գեղարուեստի նուաճումներով՝ կը համարուի քաղաքակրթութեան փայլուն ոստաններէն մէկը:

# **Քանդակագործ Ռաֆֆի Թոքաթլեանի Փառաւոր Ցուցահանդէսը Մոսկուայի «Պելաեւ» Պետական Ցուցասրահին Մէջ**

Համօ Մոսկոֆեան, Մոսկուա, 21 Հոկտեմբեր 2013

“Հայկական” Մոսկուայի արուեստի եւ գեղարուեստի ընտրանին՝ գլխաւորութեամբ  Ռուսիոյ Նկարիչներու Միութեան փոխ-նախագահ Դաւիթ Ռու-Պապայեանի, «Պելաեւ» պետական ցուցասրահի տնօրէնուհի Մարինա Պուշուեւայի եւ արտասահմանի հարցերով տնօրէն Թոմաս Յարութիւնեանի, հաւաքուած էին 2013 թուականի Հոկտեմբեր 16-ի երեկոյեան՝ բացումը կատարելու աննախընթաց իրադարձութեան մը: Առաջին անգամն ըլլալով լիբանանահայ տաղանդաշատ քանդակագործ, Ռաֆֆի Թոքաթլեանի ստեղծագործութիւնները կը ցուցադրուէին Ռուսիոյ մայրաքաղաքին մէջ, որ իր մշակութային, արուեստի ու գեղարուեստի նուաճումներով՝ կը համարուի քաղաքակրթութեան փայլուն ոստաններէն մէկը:

Իրենց հիացմունքն ու բարձր գնահատանքը Ռաֆֆի Թոքաթլեանի գերիրապաշտ եւ “աւանկարտիստ” քանդակներուն հանդէպ յայտնեցին՝ Ռուսիոյ մօտ ՀՀ դեսպանի խորհրդական՝ վաստակաշատ դիւանագիտուհի Մարիա Պապայեան, որ կը ներկայացնէր դեսպան Օլէկ Եսայեանը: Նոյնպիսի գնահատականներով արտայայտուեցաւ Իրանի Իսլամական Հանրապետութեան մշակոյթի կցորդ՝ Հիւսէյն

Թապաթապային: Իսկ հռչակաւոր գերիրապաշտ գեղանկարիչ՝ Դաւիթ Ռու-Պապայեան, լիբանանահայ քանդակագործին “հանդիսաւոր” կերպով ընդունեց Ռուսիոյ արուեստի ընտրանիին շարքերը...: Ռաֆֆի Թորքաթեան հրաւերներ ստացաւ մասնակցելու գեղարուեստի շարք մը խմբային թէ անհատական ցուցահանդեսներու նաեւ Պելլառուսիոյ, Ուրբանիոյ եւ Հայաստանի կողմէ:


Քիչ ետք ռուսական թէ հայկական զանգուածային լրատուութեան միջոցներու ներկայացուցիչներ փութացին հարցազրոյցներ կազմակերպելու Ռաֆֆի Թորքաթեանի հետ:



**Ձախէն աջ՝ Դ. Ռու-Պապայեան, Ռ. Թորքաթեան, Թ. Յարութիւնեան  
Մ. Պապայեան և Հ. Մոսկոֆեան**


Ողջոյնի ջերմ խօսքերով հանդես եկան «Պելլառու» պետական ցուցասրահի տնօրէնուհի Մարինա Պուշուեւա, տնօրէն-արուեստաբան Թոմաս Յարութիւնեան, Ռուսիոյ մօտ ՀՀ դեսպանի խորհրդական՝ վաստակաշատ դիւանագետ Մարիա Պապայեան, Ռուսիոյ Նկարիչներու Միութեան փոխ-նախագահ Դաւիթ Ռու-Պապայեան, ազատ խօսքով՝ Ռուսաստանի Հայերի Միութեան ներկայացուցիչներ:

Իր հիանալի կատարողութեամբ, Մոսկուայի երաժշտանոցի տաղանդաւոր ուսանող, դաշնակահար Արմէն Մանասեան, հիացուց ներկաները հայ թէ ռուս դասական երաժշտութեան վարպետներու ստեղծագործութիւններու կատարողութեամբ: Ապա,

 ներկաները հրաւիրուեցան վայելելու “աշնանային հիւրասիրութիւն” եւ լիբանանահայ “Պալոյ Մասթեր” (Մեծ Վարպետ) քանդակագործին եզակի ստեղծագործութիւնները, դասական երաժշտութեան ունկնդրութեամբ: Ցուցահանդեսի անթերի կազմակերպութեան մասին իրենց “մասնագիտական” ակնարկները փոխանցեցին եւ շնորհաւորեցին գեղանկարչուհի Կալինա Թիմոֆեւեան ու գերիրապաշտ նկարիչ Եւկենի Յիփուլին, հայկական ու ռուսական մամուլի լրագրողներ Արման Յակոբեան եւ Իրեն Թաշճեան «Համշեն» Երիտասարդական Միութեան նախագահ Աշոտ Տուտուքճեանը եւ փոխ-նախագահ Գեորգ Մխիթարեանը:

Զգալի էր Պաքուէն արտագաղթած հայուհիներու ներուժը ցուցահանդեսի յաջողութեան...: Անոնք, ինչպէս Հայաստանի Պետական Համոյթի նախկին մենապարուհի, արուեստագիտուհի Նաթալիա Ղազարեան, իր ամբողջ ընտանիքով, գլխաւորութեամբ խորհրդային Միութեան վաստակաւոր մարզիչ Եուրի Ղազայեանի, իրենց նեցուկը բերին ցուցահանդեսի յաջողութեան: Մինչ «Պելլառու»ի գեղանի աշխատակցուհիներ Աննա Խեչումեան եւ Եկատերինա Լիթվինովան, օրեր շարունակ տքնաջան աշխատանք տարին յաջողութեամբ պսակելու համար քանդակագործական այս ցուցահանդեսը, ինչպէս նաեւ Սփիւռք-Հայաստան-Ռուսաստան-Լիբանան այս փառատօնին յաջողութիւնը:

Բացման հանդիսութեան աւարտէն ետք, պատուոյ հիւրերն ու կազմակերպիչները միասնաբար, ճաշկերոյթով նշեցին նաեւ Ռաֆֆի Թոքաթլեանի ծննդեան տարեդարձը: Ռուս գեղանկարիչ Եւկենի Յիփոլիւն լիբանանահայ վարպետին նուիրեց պաստառ մը, որ իր խոստովանութեամբ՝ ազդուած ըլլալով հայ քանդակներէն, գիշերուան մը մէջ նկարած էր այս գերիրապաշտ՝ Քրիստոսի Խաչելութիւն եւ Յարութիւն խորհրդանշող գլուխ-գործոցը:

Յաջորդ օրը յետմիջօրէին, «Առասպել Եւ Իրականութիւն» ցուցահանդէսին երկրորդ օրը, «Պելլաեօ»ի կողքին գտնուող պուրակին մէջ տեղի ունեցաւ խորհրդանշական ողջակիզում՝ մարդկութեան ապագան շալկած քանդակի մը...: Ապա, ժամանակաւորապէս հրաժեշտ տալով «Պելլաեօ»ին եւ Մոսկուային, լիբանանահայ պատուիրակութիւնը վերադարձաւ Պէյրութ: 

Յիշեցնենք՝ որ Ռաֆֆի Թոքաթլեանի քանդակները պիտի ցուցադրուին մինչեւ Հոկտեմբեր 27, որմէ ետք նաեւ Քրեմլինի կից «Կաթինի Տվեր» (Հիւրերու Պալատ) փառաւոր համալիրին մէջ, միջազգային ցուցահանդէսներուն կից՝ որպէս նուէր Ռուսիոյ եւ արտասահմանի ընտրանիին:

Կը ծրագրուի նաեւ հետագային ցուցահանդէս մը կազմակերպել «Մանեժ»ին մէջ, որ տասնամեակներ շարունակ եղած է գեղարուեստի “մեհեան”:

«Առասպելէն՝ իրականութիւն» այս ոստիւնը Ռաֆֆի Թոքաթլեանին համար թէւ ղժուար, բայց անխուսափելի քայլ էր միջազգային քանդակագործութեան աշխարհին մէջ իր “անխախտ” տեղը ունենալու համար:

Յաջողութիւն կը մաղթենք քանդակագործին եւ իրեն նեցուկ կեցողներուն:

Մոսկուա -Պէյրութ

